




ՀԱԿՈՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

(Դոցենտ)

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ ԻՐԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԳԵՏ

Հունվարյան ցուրտ օրեր էին... օտար երկնքի տակ, անշուք ու խավար մի խրճիթում երկունքի ցավերից գալարվում էր Երևանից գերի տարված հայուհին՝ Գոհարազիզը:

Լուսադեմին կինը դադարեց տնքալուց, երբ լսվեց նորածին մանկան սուր ու աղեկեզ բողոքի ճիչը: Սպահան քաղաքում ծնվեց ապագա Ոսկան Երևանցին: Ոչ բռնավորների անարգ լուծը, ոչ մահվան սպառնալիքները և ոչ էլ անողոր ժամանակն ու տարածությունը չկարողացան գերի ծնողների՝ Թորոսի և Գոհարազիզի միջից հանել Երևանի կարոտը, սերն ու պաշտամունքը: Նրանք մոլեռանդ քուրմի նման հավատարիմ մնացին Երևանին, միայն Երևանին: Եվ այս սրբազան գաղափարը գերի ծնողները պատգամեցին իրենց նույնպես գերի որդուն:

Ու Ոսկանն ահա այդ թանկագին գանձը անթեղեց իր ջերմ սրտի խորքում: Չնայած Երևանը շտեմած, նա իր հոգու սուրբ աչքերով պատկերեց այն իր էություն, իր ուղեղի մեջ ու իրեն Երևանցի անվանեց, ուղղակի Երևանցի: Մեծ է, ջատ մեծ Ոսկանի վաստակը հայ գրքի տպագրության անդաստանում, այնպիսի մի ժամանակ, երբ երկիրը գալարվում էր օտար բռնադատիչների ճիրաններում, երբ չկար պետական հովանավոր ձեռքը, չկային նյութական միջոցներ, երբ ժողովուրդը ոչ միայն տգետ էր ու խավար, այլև տանջվում էր սովից ու վշտից: Միայն վառ հայրենասերը, անձնուրաց քա-

ղաքացին, իր ժողովրդին լուսավորելու կրակով այրվող մարդը կարող էր նվիրվել նման մի տառապալից գործի, ինչպիսին այդ ժամանակները գիրք տպագրելն էր:

Սակայն այս մասին թող խոսեն ուրիշները: Մենք մեր խոսքը մասնավորում ենք հայ երախտավորի քերականության գրքի մասին:

Օտար բռնեցի տակ հավում էր հայ ժողովուրդը, նրա լեզուն փականքի տակ էր, իսկ առանց լեզվի էլ ի՞նչ ազգ ու ժողովուրդ կարող էր ապրել... Անհրաժեշտ էր բորբոքել լեզվի առկայծող կրակները, բայց ինչպե՞ս, չէ որ չկային հայ դպրոցները, կամ շատ աննշան էին դրանք, չկային գրքեր:

Ահա այսպիսի աննպաստ պայմաններում Ոսկան վարդապետը էջմիածնից գնաց Ամստերդամ, որ հայերեն գրքեր տպագրի, որ իր ժողովրդին հոգևոր սնունդ տա, որպեսզի նա բարոյապես չկործանվի, տոկա մինչև փրկության լույսը ծագի:

Բնական է, որ Ոսկանն անմիջապես պետք է սկսեր կրոնական բնույթի գրքեր տպագրել: Բայց ահա նա չի մոռանում նաև աշխարհիկ բովանդակություն ունեցող գրքերն ու քերականությունը:

Ոսկան Երևանցին քաջ գիտեր քերականության դերը լեզվի ուսուցման և օտար ու խորթ ազդեցություններից այն պաշտպանելու և անաղարտ պահելու անհրաժեշտությունը: Ինքը իր սովորելու ընթացքում զգացել էր քերականության դասագրքերի պա-

կասր: Եվ ահա այդ բաղմաղբաղ մարդը ժամանակ է գտնում նաև քերականության դիրք կազմելու համար: 1666 թվականին Ամստերդամի իր ղեկավարած տպարանում տպագրում է քերականության մի գիրք, որը կոչվում է «Քերականութեան դիրք, համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան, ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան արհեստի»:

Իրո՞ք հայ իրականությունը այդքան ողորմելի էր, իրո՞ք չկային քերականության ձեռնարկներ: Կային, բայց դրանք ձեռագիր էին և խիստ սակավ: Հայ քերականագիտության պատմությունը շատ հարուստ է իր ձեռագիր մատյաններով: Հիշյալ ժամանակաշրջանում գործում էին Սիմեոն Զուղայեցու ձեռագիր քերականությունը և օտարազգի կրոնական քարոզիչ Կղեմես Գալանոսի տպագիր քերականությունը, որը 1645 թվականին հրատարակվել էր Հոռոմում երկու լեզվով՝ հայերեն և լատիներեն:

Բայց կարո՞ղ էին այդ կաթիլները բավարարել ծով պահանջը: Իհարկե՝ ոչ: Ոսկանը ճիշտ էր ըմբռնել այդ հրամայական պահանջը: Եվ ահա որոշ չափով այդ մեծ կարիքը թեթևացնելու համար նա ձեռնարկեց այդ գործը:

Գրքի հիշատակարանում Ոսկան վարդապետը ազնվորեն խոստովանում է, որ ինքը ոչ թե հորինել է այդ գիրքը, այլ թարգմանել է լատին քերականներից՝ ծաղկաբաղ անելով այն ամենը, ինչ ինքը պիտանի և կարևոր է համարել: Արդ, հարկ կա՞ զբաղվելու թարգմանված կամ օտար ձեռնարկների հիման վրա կազմված մի գրքի հարցով: Այո, կա և ահա թե ինչու. բանն այն է, որ Ոսկանի գիրքը, իբրև քերականություն, հայ տպագիր գրքերի մեջ, ինչպես ասացինք, երկրորդն է իր ճակատագրով (առաջինը Գալանոսին է—1645 թվ.): Ուրեմն այս գիրքը մասնավորապես հայ քերականագիտության պատմության և ընդհանրապես հայ տպագիր գրքի պատմության համար ունի վաղեմության ու հնության նշանակություն: Զարմանալի մեծ խորհուրդ... Հարստահարված ու ստրկացած մի ժողովուրդ գերագույն ճիգեր է անում, և այն էլ իր հայրենիքից դուրս, մշակութային միջոցներով հարատևելու իր գոյությունը: Այս գիրքը, անշուշտ, ուսուցողական և մանկավարժական տեսակետից ևս խոշոր դեր է խաղացել հայ իրականության մեջ՝ նպաստելով հայոց լեզվի ուսուցմանը հայկական դպրոցներում՝ ինչպես բնաշխարհում, այնպես էլ գաղթավայրերում:

Հեշտ բան չէ, երբ պետականությունից զուրկ և մրկով զարնված մի ժողովրդի մի համեստ զավակը, զուրկ նյութական տարրական հնարավորություններից, հայրենիքից դուրս զբաղվում է իր մայրենի լեզվի համար ուսումնական ձեռնարկ կազմելու և հրատարակելու դժվարին գործով: Զմոռանանք հիշեցնել, որ ճիշտ այդ նույն ժամանակ պետականություն ունեցող և ազատ առանձին ժողովուրդներ իրենց բնաշխարհում իրենց մայրենի լեզվի համար շունչին մայրենի քերականության ձեռնարկներ ո՛չ ինքնուրույն և ո՛չ էլ նույնիսկ թարգմանական, այլ առաջնորդվում էին միայն ու միայն լատինական քերականությամբ: Եղան նաև ժողովուրդներ, որոնք իրենց մայրենի քերականությունն ստեղծեցին միայն 18-րդ դարի երկրորդ կեսին և այն էլ ուրիշներից թարգմանելով:

Բացի վերոհիշյալ պատճառներից կա նաև մեկ այլ հանգամանք: Ոսկանը լավ գիտեր հայոց լեզուն, ծանոթ էր դասական գրաբարի քերականությանը, ուստի նա ոչ թե սոսկ թարգմանել կամ ծաղկաբաղ անելով կազմել է այդ գիրքը, այլ, օտար լեզվի քերականական իրողություններից ելնելով, տեղը դրել է հայերենի օրենքները, այլ կերպ ասած՝ հայացրել ու հարմարեցրել է մեր լեզվին, Ոսկան վարդապետն այս հարցում շատ լավ է դրսևորել իր քերականագիտական կարողությունները, ցուցաբերել է ինքնուրույնություն, որոշ հարցերի նկատմամբ քննադատական վերաբերմունք: Այսպես, օրինակ՝ իր գրքի 68-րդ էջի տողատակին տված ծանոթության մեջ (իր տերմինով՝ «ազգարարումն»), խոսելով կայական հոլովի մասին, ցույց է տալիս, որ այդ հոլովը հայերենում երկու կերպ է կազմվում՝ կամ երկու վերջավորությամբ է արտահայտվում, այն է՝ ում և ոչ մասնիկներով: Քերականն այսպես է վարվում նաև քերականական մյուս կարգերը շարադրելիս. օրինակ՝ հրամայական բայի կազմությունը:

Այս աշխատության մեջ Ոսկանը սկզբում սահմանում է քերականության առարկան: Ուղղամտորեն պետք է ասենք, որ Ոսկանի այս սահմանումը որոշակիորեն տարբերվում է իր նախորդների տված սահմանումներից իր ճշտությամբ, բովանդակության թարմությամբ և յուրօրինակությամբ: Այստեղ արդեն աշխարհաբաղաբացի Երևանցին է մտածում ու խոսում: Ըստ հեղինակի «Քերականութիւն է հմտութիւն գործիական մարդկայնոյ քաղաքականութեան բանակա-

¹ Ոսկան, նույն տեղում, էջ 109:

նաբար ասելով, որ և դրելով՝ զոր ինչ մտօք առնումք պարզապէս իւրաքանչիւրոյ իրի ծանօթութիւնն»:

Մարդիկ ապրում են հասարակական-քաղաքական կյանքով, կարիք են զգում միմյանց հետ մտքեր փոխանակելու, իրար մտքեր հաղորդելու: Սակայն մարդը բնութեան միջավայրում է ապրում՝ շրջապատված զանազան իրերով ու երևույթներով: Եվ մարդը անտարբեր չէ իր շրջապատի նկատմամբ, նա իր վերաբերմունքն ունի շրջապատի իրերի ու երևույթների նկատմամբ, որոնք արտացոլվում են մարդու մտքի մեջ: Այդ արտացոլումները մարդիկ հաղորդում կամ մշակում են հայտնում բանավոր կամ գրավոր ձևով:

Այսպիսով, քերականութիւնը ոչ այլ ինչ է, քան այն գիտութիւնը, որն զբաղվում է մարդու մտքի մեջ արտաքին աշխարհից արտացոլված իրերի ու երևույթների և դրանց պատկերացումների բանավոր կամ գրավոր արտահայտված իրողութեամբ, այսինքն՝ նա բանավոր և գրավոր խոսքի գիտութիւնն է:

Կարելի է համարձակորեն ասել, որ հայ քերականագիտութեան պատմութեան մեջ այսպիսի սահմանում առաջին անգամ է տրվում: Այս մեկնութիւնն ինչպես իր ձևով, այնպես էլ իր բովանդակությամբ տարբերվում է մինչ Ոսկանն եղած հայ ավանդական քերականութեան մեկնաբանումներից: Իր նախորդների նման և ավանդաբար, Ոսկանը ևս քերականութեան նյութը բաժանում է չորս մասի՝ գիր, վանկ, բառ, բան: Ելնելով այս սկզբունքից՝ նա հերթականությամբ խոսում է գրի մասին, տալիս է տառերի քանակն ու տեսակը, ապա խոսում է վանկի մասին, հետո տալիս է բառի բնորոշումը, իսկ վերջում սահմանում է բանը:

Ոսկանի՝ խոսքի մասերի դասակարգումը համընկնում է գրաբարի վաղ շրջանի քերականների դասակարգմանը, այն է՝ անուն, բայ, ընդունելութիւն, դերանուն, նախադրութիւն, մակբայ և շաղկապ. այստեղ միայն բացակայում է հոգը, որ կար նախորդ քերականների մոտ: Ինչպես տեսնում ենք, Ոսկանը գրեթե հարազատ է մնացել մեր հայրենի դասական քերականութեան սովորութիւնների ու ավանդութեանը: Իսկ իր ժամանակի քերականների (Ջուղայեցի, Գալանոս) հետ համեմատելիս, անշուշտ, որոշ տարբերութիւն տեսնում ենք:

Նախորդ հայ քերականների նման Ոսկանի մոտ էլ չկա խոսքի և նախադասութեան հասկացութիւնների տարբերակում: Բան ասելով այս քերականն էլ, ինչպես և իր նախորդները, հասկանում է և՛ խոսքը, և՛ նախադասութիւնը: Խոսելով «բան»-ի մասին՝ Ոսկանը գրում է. «Բան է բառից շարամանութիւն, կարգաւորեալ առ ի յայտնել՝ զոր ինչ մտօք շարամանաբար շար առնումք» (նախադասութիւնը բառերի շարահյուսական այնպիսի կարգավորված դասավորութիւն է, որ մեր մտքի խորհուրդն է արտահայտում):² Կամ՝ «Բան է շարամանութիւն բառից, առ ի բացատրել զայլ իմն իրակութիւն, զայլմէ էութենէն»³:

Ինչպես նկատում ենք, Ոսկանը գրի չի մնացել ավանդաբար իրեն հասած սահմանումներին, այլ փորձել է, որքան հնարավոր է, նոր սահմանումներ տալ կամ նոր նրբերանգներ մտցնել եղած սահմանումների մեջ:

Ննդրադառնալով անվան հարցին՝ Ոսկանը իր նախորդների նման ճանաչում է երկու տեսակ՝ գոյացական անուն, և ածական անուն:

Ինչպես գիտենք, գրաբարի վաղ շրջանում քերականի մեկնիչներն ընդունել էին վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական: Որոշ մեկնիչներ հոշականն անվանել են կոշական, իսկ առաքականի հետ զուգահեռաբար գործածել են ցուցական տերմինը: Ջուղայեցին սրանց վրա ավելացրեց նոր հոլովներ (պատմական, պարառական, ներգործական և այլն). մշակները կուրորեն հետևեցին Ջուղայեցուն, և հայերենի քերականութիւնները ծանրաբեռնվեցին նոր արհեստական հոլովներով, որոնք ըստ էութեան բոլորովին էլ անկախ հոլովներ չէին:

Ոսկանը զգաստ և գիտական մոտեցում ցուցաբերեց հոլովների հարցում: Նա ելավ մեր լեզվի գործուն օրինաչափութիւններից և հայերենում սահմանեց 8 հոլով՝ հրաժարվելով պարառականից և պատմականից, որոնք, ըստ էութեան, նոր հոլովներ չէին և չէին բխում մեր լեզվի էութիւնից: Այս հարցում էլ Ոսկանը դրսևորեց հայերենին լավ գիտակ լինելու, քերականութեան հարցերը հստակ պատկերացնելու իր կարողութիւնները:

Հուլյն և լատին լեզուներն ունենին՝ առաջինը 5 հոլով (չունի բացառականն ու գործիականը), երկրորդը՝ 6 հոլով (չունի գործիականը): Այսպիսով, հոլովների քանակի

² Ոսկան, նույն տեղում, էջ 3:

³ Տե՛ս Ն. Աղոնց. Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնը նորին, Ս. Պետերբուրգ, 1915 թ., էջ 202:

⁴ Նույն տեղում, էջ 4:

⁵ Ոսկան, նույն տեղում, էջ 40:

հարցը որոշելիս՝ Ոսկանն առաջնորդվել է մեր լեզվի իրողություններով և հատկապես հենվել է գրաբարի վաղ շրջանի քերականների փաստերի վրա: Ոսկանի այս խելոք, համարաձակ և լեզվագիտական տեսակետից ճիշտ մոտեցումը իր ժամանակի համար պետք է համարել իմաստուն և բացառիկ խիզախ քայլ:

Ի դեպ, որպես թերութուն պետք է նշենք այն, որ Ոսկանից հետո եկող քերականները անուշադրության մատենցին այս շատ կարևոր տեսակետը և տասը հոլովները շարունակեցին մեխանիկորեն դնել իրենց քերականությունների մեջ: Հետագայում Հ. Արս. Բագրատունին և Հ. Գար. Ավետիքյանը լուրջ քննության առարկա դարձրին հայերենի հոլովների քանակի հարցը ու իրավացիորեն հրաժարվեցին մեր լեզվի համար ավելորդ հոլովներից: Ավետիքյանն ու Բագրատունին այս հարցում, անշուշտ, հաշվի են առել նաև Ոսկանի տեսակետը: Սրանք ընդունել են արդի հոլովները, առանց ներգույականի: Ավետիքյանն իր գրքում նշում է Ոսկանի հոլովների քանակի մասին. «Ոսկան 8 կրսէ,— գրում է Ավետիքյանը,— չճանչնալով պատմական և պարառական հոլով»:

Անվան թեքման համար գրաբարի վաղ շրջանում երկու տերմին են գործածել՝ հոլով և թավալում: Հոլովում բառի փոխարեն Ոսկանը գործածել է նոր տերմին՝ աճկ, որը ճիշտ չէր, ուստի և հետագա քերականները ճիշտ են վարվում և այդ տերմինը չեն մտցնում իրենց քերականությունների մեջ: Եթե չհաշվենք կայական հոլովը, ապա Ոսկանի մոտ մնում է վեց հոլով, այսինքն՝ այնքան, որքան կար գրաբարի վաղ շրջանում և մինչև Զուղայեցի:

Ի դեպ՝ Ոսկանը կայական և պարառական տերմինները գործածում է որպես հոմանիշներ և երկուսն էլ գրեթե հավասարապես ու փոխեփոխ: Ոսկանը կայական և պարառական հոլովների անվան տակ հասկանում է ներգույական հոլովի գաղափարը:

Այսպես՝ անձնական դերանունների բաժնում պարառական հոլովի դիմաց դնում է այսպիսի օրինակներ՝ ներ իմ, ներ մեզ, (կամ իս), ի մեզ:

⁶ ա) Հ. Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815 թ.:

բ) Ի դեպ, ասենք, որ 1727 թվականին Մխիթար Սեբաստացին ևս իր աշխարհարարի քերականության մեջ ընդունում է վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: (Տե՛ս Մ. Սեբաստացի, Դոտն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վենետիկ, 1727 թ., էջ 3—10, հարառ լեզուին հայոց, նույն տեղում, էջ 17, 107, 143, 207, 7 Տե՛ս Ն. Աղանց, նույն տեղում, էջ 17, 107, 143, 207,

Սկզբնականի դիմաց էլ բերում է՝ յինէն. ի մէջ օրինակները. սրանք էլ բացառականի հասկացությունն են նշում: Այսպիսով, եթե հոշականը (կոշականը) հանենք, ապա Ոսկանի մոտ փաստորեն մնում են այն յոթ հոլովները, որոնք հետագա քերականները և նրանցից հետո եկողները, ընդհուպ մինչև մեր օրերը, ընդունել են հիմք. և անփոփոխ ձևով դնում են հայերենի քերականություններում:

Ոսկանի հայերենի հոլովական համակարգի հենց այսպիսի ճշգրտումը ինքնին մեծ ծառայություն է հայագիտության և հայոց լեզվի քերականագիտության պատմության համար:

Հոլովների սահմանումներն ու բնորոշումները, սակայն, շատ են սեղմ Ոսկանի գրքում: Այսպես՝ «ասի սեռական ի սերելոյ, ասի տրական յընծայելոյ, քանզի ում որ ինչ տվի, ասի հայցական ի հայցելոյ, զի որ ինչ հայցեմք, ասի գործիական, քանզի որով զործեմք»:

Ոսկանը ճշգրտում է մտցնում կայական հոլովի հասկացության մեջ, նոր տերմին է ստեղծում և մոտավորապես ճշտորեն տալիս է նրա էությունը: Գործիական հոլով տերմինը դրանից հետո մտնում է մեր քերականությունների մեջ և իր զորությունը շարունակում առ այսօր:

Ճիշտ է նաև բալի սահմանումը. «Բայ նշանակում է գիրակութիւն էութեան (սիրեմ, ատեմ)»—գրում է քերականը:

Այս կերպ, մեկ առ մեկ բացատրում է խոսքի իր ընդունած յոթ մասերը, տալիս է հոլովման ու խոնարհման պատկերը, ապա անցնում է թվարկած խոսքի մասերի համաձայնությանը:

Ոսկանի մոտ շարահյուսությունը դեռևս չի տարբերակված, այլ ձուլված է ձևաբանության հետ. շարահյուսական հասկացությունները բացատրվում են ձևաբանական տերմիններով: Սա, իհարկե, միայն Ոսկանի մեղքը չէր: Գրաբարի վաղ շրջանից մինչև ուշ միջնադարը շարահյուսությունը դեռևս որոշակիորեն չէր սահմանազատված ձևաբանությունից: Նույն պատկերն էր նաև աշխարհի բոլոր մասերում ու բոլոր ազգերի մոտ, որոնք քերականություն ունեին: Այսուամենայնիվ, ինչպես մյուսների, այնպես էլ Ոսկանի մոտ, շարահյուսական համակարգի նշմարները նկատելի են, այսինքն՝ այդ հասկացությունը կա: Այսպես, օրինակ՝ «Ընդէր ամենայն գործաւորութիւն որոյ է ներգործութիւն, զնի նանուանաւորում: Քան-

⁸ Ոսկան, նույն տեղում, էջ 11:

⁹ Ոսկան, նույն տեղում, էջ 19:

լի իր կամ էութիւն յորմէ ասի ներգործութիւն է կամ է պատճառ իրակութեան՝ դնի նանուանաւորում, զոր կոչեմք ուղղական¹⁰:

Սա հենց ենթակայի հասկացութիւնն է, իսկ ենթական շարահյուսական իրողութիւնն է: Անուանաւորը (այսինքն՝ ենթական), որ գործողութեան տերն է, եղելութեան թելադրողը, դրվում է ուղղական հոլովով:

Ըստ Ոսկանի անվանավորը միշտ պետք է համաձայնի իր իրակութեան հետ, այսինքն՝ առարկան, գործողութիւնը կատարողը պետք է համաձայնի իր գործողութեան հետ: Կարճ ասած՝ անունը բայի հետ¹¹:

Սրանից հետո հեղինակը նշում է, որ բայն իր անվանավորի հետ (ստորոգյալն իր ենթականի հետ) պետք է համաձայնի դեմքով ու թվով, օրինակ՝ հեղինակը նշում է նաև, որ այս կարգից շեղում են կատարում անբերելի բայերը:

Հետաքրքիրն այն է, որ քերականը մի տեղ անունավորի փոխարեն գործադրում է բայի կառավարող, այն, ինչ մյուս քերականները անվանում էին տեր բայի: Այսպես՝ բայի կառավարողը (ենթական) միշտ չէ, որ ուղղականով է դրվում, նա կարող է դրվել նաև տրականով, օր.՝ Պղատոնի է այս հմտութիւն կարգեալ:

Քերականն ունի նախադասութեան փոխակերպման գաղափարը ևս, այսինքն՝ երբ ներգործող սեռի բայով արտահայտված նախադասութիւնը փոխարինվում է կրավորականով. օր.՝ Արեգակն շեռուցանէ գերկիր նախադասութիւնը փոխարկում, դարձնում է կրավորակերպ. այսպես՝ երկիր ջեռուցանի յարեգակնէ: Կրավորականի դեպքում ենթական դառնում է երկիրը, որ առաջին նախադասութեան մեջ ուղիղ խնդիրն էր:

Խոսելով բայերի մասին՝ Ոսկանը նշում է, որ բայերը կարող են իրենցից առաջ և հետո պահանջել տարբեր հոլովներով անվանավորներ (անուններ—Հ. Մ.). օրինակ՝ ես սիրեմ սիրով, դու շարժիս շարժմամբ: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ խնդրի գաղափարը: Այսպիսով, Ոսկանը դեռ չտարրոշված և ոչ այնքան հստակ, սակայն ունի խնդրի գաղափարը: Երբ նա ունի խնդրի գաղափարը, պետք է ունենա նաև խնդրառութեան գաղափարը: Ոսկանը տալիս է բայերի ու անունների (թե՛ ենթականի, և թե՛ խնդրի առումներով) համաձայնութիւնը, չնայած նա այդպիսի տերմին չի գործածում: Ոսկանը տալիս է հայցական ու տրական հոլովներով խնդիրների և բայերի համաձայնութիւնը, դրանց կապակցութիւնը, որը մատուցման

և հանգաման և ուղիղ խնդրի հասկացութիւնն է: Օրինակ՝ ես ծառայեմ Աստուծոյ, դու տիրես երկրի: Սրանից հետո Ոսկանը տալիս է բայի և ընդունելութեան, ածականի և գոյականի համաձայնութիւնը: Ածականի համաձայնութեան հարցում Ոսկանը համամիտ է լատինաբանների հետ, այն է՝ ածական անունը, անկախ նրա գործածութիւնից (թե՛ նախադաս և թե՛ ետադաս) բոլոր դեպքերում, առանց բացառութեան, պետք է համաձայնի իր գոյականի հետ դեմքով, թվով, հոլովով և սեռով, այո, նույնիսկ սեռով, մի բան, որ օտար էր հայոց լեզվի քերականութեան ավանդական կանոններին: Այն հարցին, թե ինչու՞ բոլոր լեզուներում ածականը պետք է համաձայնի իր գոյականի հետ, Ոսկանը պատասխանում է. «Քանզի պատահումն և յատկութիւն է նորին, որոյ է պատահումն և յատկութիւն, նմին պարագայի համաձայնի»¹²: Այս մեկնաբանութիւնից հետո քերականը բերում է այսպիսի օրինակներ. ա) Ծա այր բարի, բ) դու կին բարուհի, գ) մեզ արանց բարեաց, դ) ձեզ կանանց բարուհեաց, ե) նոքա գերիք բարիք և այլն:

Այսպիսով, քանի որ ածականը գոյականի հատկութիւնն ու զանազան հանգամանքներն է ցույց տալիս, ապա ուրեմն պարտադիր կարգով պետք է համաձայնի թվով ու հոլովով այն գոյականի հետ, որին նա վերաբերում է: Դասական հայերենը հարուստ մայակներ առաջ, ելնելով իր օրինաչափութիւններից, մշակել էր սրան հակադիր իր ուրույն կանոնները, այն է՝ նախադաս գործածված ածականը երբեք չպետք է համաձայնի իր գոյականին թվով և հոլովով, իսկ ետադաս գործածված ածականը պետք է համաձայնի: Ոսկանը, որ Զուղայեցու դասընկերն է եղել, ծանոթ է նրա կազմած քերականութեան սկզբունքներին, որոնց համաձայն արգելվում է նախադաս գործածված ածականի համաձայնեցումն իր գոյականի հետ, գիտե՛ր նաև անցյալի հայ քերականների դիրքավորումն այս հարցում, ինչու է թույլ տալիս նման սխալ: Առաջին հայացքից կթվա, թե Ոսկանը լատինամու է, նրանց ազդեցությամբ է արել այս խիստ հակասական շեղումը:

Ամենևին ոչ:

Ով ծանոթ է Ոսկանի ողբերգական կյանքին ու նրա կրած հալածանքներին, երբեք էլ այդպես չի մտածի: Ամբողջ գաղտնիքն այն է, որ լատինացած հայերն ու Հռոմի լատին քարոզիչները Ոսկանի դեմ անմարդկային դավեր ու նենգութիւններ են լարել:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 40:

¹² Ոսկան, նույն տեղում, էջ 41—42:

նպատակ ունենալով ցրելու նրա տպարանն ու խափանել նրա ազգագուտ մեծ առաքելությունը: Այս ամենը Ոսկանը հաշվի էր առել և, որպես հեռատես ու ազգանվեր գործիչ, կշռադատել էր շարժումն ու բարին և ընտրել էր զիջումների ճանապարհը: Նա ուղղակի գիտակցաբար լատինամոլներին իր դեմ, առավել ևս իր գրքի ու իր ողջ գործունեության դեմ չհանելու համար արել էր այս քայլը: Սա մի նուրբ դիվանագիտական խաղ էր, որը, սակայն, որևէ կերպ չկարողացավ մեղմել թշնամիների զայրույթը:

Քերականը շնայած հստակորեն չի տարբերակում, բայց արդեն գիտակցում է պարագաների շարահյուսական դերն ու էությունը: Այսպես՝ նա ճանաչում է ժամտեսակի, տեղի, չափ ու քանակի, հարցական, ըզձական և այլ պարագաներ, ըստ որում տեղի պարագան երեքից-չորս ենթատեսակով: Խոսելով տեղ ցույց տվող մակբայների մասին՝ նա գրում է. «զշարժողութիւն ի տեղւոջէ նշանակին ուստի, աստի, անտի, ուստէք, իբրու, ի վերուստ, ի ներքուստ, յարտաքուստ և այլն»:

Մեզ տրամադրված հնարավորության սուղ պայմաններում մենք չենք կարող անդրադառնալ Ոսկան վարդապետի քերականության մեջ շոշափված բոլոր հարցերին և

դրանք շարադրել սպառիչ ձևով: Սակայն հաշվի առնելով այն աններելի անտարբերությունը, որ ցուցաբերվել է Ոսկան վարդապետի քերականական ժառանգության նկատմամբ, մենք ցանկացանք թեկուզ ընդհանուր գծերով գնահատել հայ ժողովրդի երախտավոր ու անձնուրաց զավակի վերահիշյալ գրքի մի քանի արժանիքները և խաղացած պատմական դերն ու նշանակությունը ինչպես իր, այնպես էլ հետագա ժամանակների համար: Ծատ մարդիկ են զալիս ու գնում, բայց նրանցից քչերն են հիշվում և ապրում այս հավերժ աշխարհում: Ոսկանը այն սակավ քչերից է, որոնք միշտ պիտի հիշվեն, հենց որ հայոց տպագրության գործը աչքի ածեն: Նա առանց փառքի ու անձնական շահի իր անձնվեր և անձնուրաց գործով իր կյանքը նվիրեց հայ ժողովրդին, նրանից խնդրելով շատ համեստ մի բան. «Զնուստ անձս տէր Ոսկան բանի սպասաւոր յիշել աղերսեմ»:

Եվ մենք պարտավոր ենք այսպիսի ազնիվ հայրենասերին հիշել ու նրա հիշատակի առաջ մեր գլուխները խոնարհել: Հուսով ենք, որ բանասերները պատշաճ վերաբերմունք կցուցաբերեն Ոսկանի ողջ ժառանգության ուսումնասիրության գործում:

